հոն տեղ կեցաւ խել մը ատեն ոյժ առնելու համար ։ Ճամբորդութեան մնացած մասը Ռիլքաքելի նահանգին մէջ ըրաւ Սամօսլի Նարաձէն և Նոլքաքաթէն անցնելով, ուր որ թէպէտ և կարգէ դուրս դիպուածներ չհանդիպեցան, բայց բաւական նեղութիւններ և վտանգներ գլխէն անցան ։ Ընքըդիլ երբեմն ծովով և երբեմն ցամաքով ճամբայ ըրաւ, երբեմն ալ պատգարակով, և շատ անգամ՝ բոպիկ ոտքով մորենիներուն և արեւակէզ աւազուտներու մէջէն ճամբայ ընելով ։ Պաշխկներու զգեստ հագած էր, որպէս զի Եւրոպացի ըլլալը չճանչցուի և անով չքանուի ․ միշտ վախի մէջ էր որ չըլլայ թէ Ընգլիացւոց մատնուի, անոր համար կ՚ուզէր որ միշտ զինուած ըլլան իր ուղեցոյցները ։ Աշըբոր Բոնտիշէրի հասաւ, հաշիւ ըրաւ որ Գիալքանէն ինչուան հոն հարիւր մէկ օր ճամբայ ըրեր էր, որոնց յիսունըվեց օրը քալելով և քառասունըհինգ օր ալ այլ և այլ տեղուանք հանգիստ առնելով անցուցեր էր ։ Կարգէ դուրս ուրախութիւն պատճառեց իրեն հոն հասնիլը ։ Իր եղբայրն և բարեկամները զինքը մեծ խնդութեամբ ընդունեցան ․ վասն զի պարոն Էյրէթ իրենց շատ անգամ ըսեր էր թէ մեռած է ինքը, և իրեն մահուան լուրը, որ նախ Պենկալայի մէջ հռչակուեր էր, իր բազմավաստակ ուղեւորութեանը ատեն հաստատուեր էր ։

Կը շարունակուի ։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Արեւելեան վերջին խնդիրն ու պատերազմը [1] ։

1855 — ՄԱՅԻՍ

Գաղղիոյ յօդուած ու առաջարկելու դաշինքին ։ Եթէ Ռուսաստան սահմանեալ նաւերուն թիւէն աւելի նաւ ուզենայ պահել Սեւ ծովուն մէջ, աս պայմանիս միաբան իրեն առաջարկուելէն ետքը, պատերազմի գէպք ալինի սեպուի աս իրեն պահանջմունքը, որպէս զի բռնադատեն զՌուսը յանձն առնելու աս պայմանս Եւրոպայի ընդհանուր օգտին համար ։

— Պաշտօնագիր Պուլ կոմսին առ պարոն Հիւպներ դեսպան Աւստրիոյ 'ի Բարիզ․ կը յանձնէ մանաւորապէս որ ընդունելի ընել տայ Գաղղիոյ իր ըրած առաջարկութիւնը ․ Աւստրիոյ դահլճին կարծիքն է որ չէ թէ միայն Ռուսաց նաւական զօրութիւնը նուազեցընելով, այլ թէ կարելի ալ ըլլար բոլորովին փճացընել ևս, բայց հանդերձ այսու ամենայնիւ կարելի չէ Ռուսաց ազդեցութիւնը նուազեցընել որ իրեն աշխարհագրական դիրքին պատճառաւը ունի Բարձրագոյն դրան նկատմամբ ․ անոր համար ուրիշ բան պէտք չէ ընել, բայց եթէ անանկ արգելքներ դնել որ իրեն դիրքին համար ունեցած առաւելութիւններովը չկարենայ զեղծանիլ ։

Աւստրիա չկարծեր որ Ռուսաստան յանձն առնու իր նաւական զօրութիւնը նուազեցընել դեկտեմբերի 2ին դաշնագրութեան մէջի եղածին համեմատ ։ Իսկ թէ Արեւմտեան տէրութիւնները պատերազմի արկածից կամ բաղդին ուզենան ապաւել, որ իրենց ըրած զոհերուն համեմատ աւելի շահաւէտ վախճան մը ունենան, Աւստրիա հանդարտ իր տեղը կը կենայ, որ ատենին կարենայ խաղաղութեան ժողովոյն սկսիլը նորէն առաջարկել ։

22 ․ Գաղղիացիք Ռուսաց հետ կը պատերազմին Սեւաստոպոլի առջև եղած գերեզմանատան ձորին մէջ ․ Գաղղիացիք քանի մը անգամ յարձակմունք կ՚ընեն Ռուսաց պատնէշներուն վրայ ․ 23էն 24 լուսնալու գիշերը նորէն կը սկսին Գաղղիացիք յարձակմունքը աւելի կատաղութեամբ ․ վերջապէս կը տիրեն Գաղղիացիք պատնէշներուն իրենց Սալ զօրավարին առաջնորդութեամբը ․ երկու կողմանէ ալ կորուստը խիստ սաստիկ կ՚ըլլայ ։ Ռուսացմէ Ադլէրպէրկ զօրավարը կը մեռնի ։ 23ին դաշնակիցք Չեռնայայի կը տիրեն ։

23 ․ Վալեվսքի կոմսը Նեսելրոտ կոմսին մայիսի 10ին հրատարակած շրջաբերականին պատասխան տալով կ՚ըսէ, թէ պատերազմին երկննալուն պատճառն ու հետեւանքները Ռուսաց վրայ կ՚իյնան ․ որովհետև Գաղղիոյ և Անգղիոյ ըրած առաջարկութիւնները իրեն պատւոյն չէին դպչիր ․ և թէ ինքը ուզենար հրաժարիլ իր Սև ծովուն մէջի ունեցած տարապայման նաւական զօրութենէն, իրենք յանձն կ՚առնուին նորէն ժողովքի նստիլ ։

[1] Տես Հտ․ ԺԳ․ երես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334 ․ Հտ․ ԺԴ, երես 11, 82, 129, 162, 227, 275, 307, 355, 371 ․ ԺԵ, երես 15, 51, 131, 163 ։

10219361

24 · Դաշնակիցք Գամըշ Պուռնու բռնած կըրձին վրայ զօրքը ցամաք կը հանեն, որն որ Սև ծովուն և Ազախու ծովուն մէջ կ'իյնայ · 25ին Կերչի ու Ենիքալէի կը տիրեն: Ռուսք Թշնամեաց մօտենալը տեսնալնուն պէս ունեցած շոգենաւնին կ'այրեն, բերդերը օդ կը հանեն: Նմանն 28ին Ճինիչկէն կը գնդակակոծեն, և նաւահանգստին մէջի եղած թէ վաճառականի և թէ պատերազմական նաւերը կ'այրեն:

Մտերմական պաշտօնագիր Աւստրիոյ, որով կը ծանուցանէ Պերլինի դահլիճին որ եթէ իր վերջի ըրած առաջարկութիւնները ընդունելի չըլլան Գաղղիոյ և Անգղիոյ, ինքը անկէ ետքը աւելի բանի մը չխառնուիր և պատերազմական վիճակի մէջ չմտներ · միայն իրեն փոյթը ան պիտի ըլլայ որ Օսմանեան հողին ամբողջութիւնը չխախտուի:

28 · Ռուսք Սուճուք Գալէն կը պարպեն · ինչպէս նաև Անափան ալ յունիսի 8ին:

29 · Լորտ Գլարէնտոն Ուեստմորլէնտ լորտին սա ամսուս 16ին գրած պաշտօնագրին պատասխանելով կ'ըսէ (տես մայիս 16) որ չկրնար յանձն առնուլ Անգղիա Աւստրիոյ առաջարկութիւնը, որովհետև դաշնակից տէրութեանց ձեռք զարկած գործողութիւնը յուսահատեալ բան մը չէ, որով ստիպուէին Ռուսաց մէյմը մերժած առաջարկութիւնը նորէն առաջարկել, ևս առաւել որ եղած սա նոր առաջարկութիւնը Ռուսաց զօրութիւնը չափաւորելու բաւական ճամբաներ չցուցըներ · դարձեալ ամենևին խօսք մը չըլլար յանցաւորաց ընդհանուր թողութեան համար, ինչպէս նաև յիշատակութիւն մըն ալ չկայ Սարտենիոյ նկատմամբ:

ՅՈՒՆԻՍ

2 · Անգղիա բոլորովին կը մերժէ Աւստրիոյ վերջի ըրած խաղաղական առաջարկութիւնը:

3 · Դաշնակիցք Թականրոկը կը գնդակակոծեն, որ Ազախու ծովուն մէջն է:

4 · Վերջին գումարումն Վիէննայի խորհրդակցութեանց ժողովոյն, որուն ներկայ կը գտնուէին Աւստրիոյ կողմանէ Պուլ կոմսն ու Բրոքէշ պարոնը · Գաղղիոյ կողմանէ Պ · Պուրքընէյ · Ռուսաց կողմանէ Կորչաքոֆ իշխանը և Թիթոֆ · Ուեստմորլէնտ, Ալի և Արիֆ փաշաները Անգղիոյ և Տաճկի կողմանէ: Աւստրիա նոր առաջարկութիւն մը կ'ընէ Ռուսաց և Տաճկի Սև ծովուն մէջ ունեցած նաւական զօրութիւններին հաւասարակշիռ ընելու նկատմամբ: Ռուսաց լիազօր դեսպանները, ինչպէս նաև Գաղղիոյ և Անգղիոյ դեսպանները խելքի յարմար կը տեսնան սա առաջարկութիւնս, բայց բան մը չորոշուիր · որով ան ատեն Պուլ կոմսը կը ծանուցանէ թէ Աւստրիա ուրիշ նոր առաջարկութիւն մը չունի ընելիք, և թէ որ և իցէ ատեն հարկ ըլլայ սա առաջարկութեանս վրայ մտածել, ինքը պատրաստ է նորէն ժողովքը բանալ երբոր հասարակաց խաղաղութեան յարմար տեսնուի:

6 · Դաշնակիցք Սեւաստոպոլի արտաքին ամրութիւնները կը սկսին գնդակոծել որ երկու օրի չափ կը տևէ · որով Գաղղիացիք կը տիրեն Մամելոն-վէր, և նաւերը նորոգելու տեղւոյն ամրութեանցը 400 հոգի Ռուսներէն գերի ընելով, և միանգամայն ձեռք կը ձգեն սա ամրութեանց թնդանօթները · նոյնպէս Անգղիացիք ալ ուրիշ մարտկոցի մը կը տիրեն: Ութին Գաղղիացւոց Լավարան զօրավարը գնտակի հարուածով մը կը սպաննուի:

9 · Գաղղիացիք և Անգղիացիք պաշարման վիճակի մէջ կը դնեն Ճերմակ ծովը և Ֆինլանտեան ու Պոթնեան ծոցերուն բոլոր նաւահանգիստները:

11 · Ռուսաց դահլիճը պատասխան կուտայ Վոլեվսքի կոմսին մէկ շրջաբերականին ըսելով, թէ խաղաղութիւնը հաւանականաբար կրնար յաջողիլ, եթէ Գաղղիոյ և Անգղիոյ դեսպանները չի մերժէին Աւստրիոյ ըրած առաջարկութիւնը, որով կրնային առանց մէկ կամ մէկալ կողմին պատուոյն դպչելու խաղաղութիւնը գլուխ հանել · ասով պատերազմին երկընցնալուն պատճառը արևմտեան տէրութեանց վրայ կ'իյնայ, և թէ Ռուսաստան խաղաղութիւն ընելու պատրաստ է:

12 · Քլարէնտոն կոմսը ծանուցագիր մը կը խաւրէ Ուեստմորլէնտ լորտին, պարզաբանելով ան պատճառները որոնց համար անկարելի էր խաղաղութեան պայմանները յանձն առնուլ, և թուղթը կը լմընցընէ ըսելով թէ Աւստրիա դեկտեմբերի 2ին դաշանցը դէմ ըրաւ պատերազմի հաղորդակից չըլլալով, որուն պարտաւորեալ էր նոյն դեկտեմբերի 2ին դաշանց պայմաններուն զօրութեամբը եթէ Ռուսք չընդունէր նոյն դաշինքին պայմանները, ինչպէս որ ալ իրօք չընդունեցաւ · ասով արևմտեան տէրութիւնք ալ պարտաւորեալ չեն նոր առաջարկութիւններ ընդունիլ և անոնց վրայ խօսիլ և վիճել, ինչպէս որ Աւստրիա կը պահանջէ · սա պատճառներուս համար Գաղղիա և Անգղիա Վիէննայի մէջ եղած խորհրդակցութիւնները չեղածի պէս կը սեպեն, որով և ժամանակին հանգամանաց համեմատ կ'ուզեն շարժիլ:

18 · Դաշնակիցք Մեծ Ռէտանը և Մալաքոֆի աշտարակը 48 ժամ գնդակակոծելէն վերջը յարձակմունք մը կ'ընեն սա մարտկոցներուն վրայ · բայց մեծ կորուստով կը ստիպուէին ետքաշուելու: Անգղիացիք 1295 հոգի կը կորսնցընեն, որոնց մէջն է նաև Գեմբէլ զօրավարը · Իսկ Գաղղիացիք 3338ը հոգի կը կորսնցընեն ընդ մեռեալ և ընդ վիրաւոր · մեռնողներուն թիւին մէջ կը գտնուէին Մէյրան և Պրիւնէ զօրավարները:

19 · Քլարէնտոն կոմսը շրջաբերական գիր մը կը խաւրէ Անգղիոյ ուրիշ տէրութեանց քով ունեցած դեսպաններուն, որուն մէջ մէկիկ մէկիկ առաջ կը բերէ ան պատճառները, որոնց համար Վիէննայի խորհրդակցութեանց ժողովը լուծուեցաւ · սա գրուածքովս կը հերքէ Վիէննայի և Բեդրպուրկի դահլիճներուն շրջաբերականները · աւելորդ կը սեպենք մի առ մի սա պատճառները առաջ բերելու, որովհետև քիչ շատ նոյն են սա խնդրոյս նկատմամբ ինչուան հիմա ըսուած պատճառներուն հետ:

28 · Աւստրիա շրջաբերական գիր մը կը խաւրէ բոլոր Գերմանական տէրութեանց, որով ժողովքի կը հրաւիրէ զիրենք, որպէս զի քննեն և իմանան Արևելեան խնդրոյն արդի վիճակը, և թէ հարկաւոր է արդեօք որ Գերմանական դաշնակցութիւնը ոտքի վրայ բանէ իր զօրքը:

— Լորտ Ռէկլէն մարաջախտը բնական մահուամբ կը մեռնի, և իրեն տեղը կ'անցնի Սիմբըն զօրավարը:

ՅՈՒԼԻՍ

11 · Ռուսաց Սթեֆանովիչ Նաքիմով ծովակալը Սեւաստոպոլի մէջ վիրաւորուելով երկրորդ օրը կը մեռնի ։

ՕԳՈՍՏՈՍ

9 · Պալթիկ ծովի միացեալ նաւատորմիղը Ռուսաց Շվէպորկ բերդաքաղաքը կը գնդակակոծեն . Գաղղիացւոց նաւատորմիղին հրամանատարն էր Բեռնոյ ծովակալը և Անգղիացւոցը Տընատաս . 11էն ինչուան 13 կը տեւէ գնդակակոծութիւնը 48 ժամ անընդհատ . բայց վերջը նաւատորմիղները ետ կը քաշուին ։

16 · Պատերազմ Թրոքթիրի կամուրջի ըսուած . Ռուսք 60,000 զօրքով Չերնայիայի կողմը կը յարձակին երկու թեւ բաժնուած . աջ թեւին 'ի սկզբան կը հրամայէր Ռաա զօրավարը , որն որ մահացու վէրք մը ընդունելով պատերազմէն դուրս կը հանուի , և իր տեղը հրամանատարութիւնը ձեռք կ'առնէ Կորշաքով իշխանը . ձախ թեւին կը հրամայէր Լիբրանոի զօրավարը ։ Բայց Ռուսք 6000 հոգի կորսընցնելով կը ստիպուին ետ քաշուիլ . մեկալ կողմանէ գլխաւոր պատերազմողներն էին Գաղղիացիք Բելիսիէի հրամանատարութեան տակ , և իրենց օգնական եղան Սարտենիացիք որոնց հրամանատարն էր Լա–Մարմորա զօրավարը ։ Սարտենիացւոցմէ Մոնթեվէրքիոյ զօրավարը մահացու վէրքով վիրաւորուեցաւ . իսկ Ռուսք կորսընցուցին Ռաա , Վրեվսքի և Վէյմարն զօրավարները ։

18 · Անգղիացւոց թագուհին Բարիզ կուգայ և ինչուան ամսուս 27ը հոն կը մնայ ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ

3 · Պատերազմ Ռուսաց ընդդէմ Տաճկաց Կարսի գիմաց , որուն մէջ Ռուսք աւելի շահաւոր կ'ելլան , բայց վախճան մը չունենար ։

5 · Դաշնակիցք Մալաքոֆի աշտարակը կը սկսին գնդակակոծել 700 թնդանօթով ։

8 · Իրենք օր անընդհատ Սեւաստոպոլին գնդակակոծելէն վերջը դաշնակիցք կը սկսին մարտկոցներուն վրայ յարձակիլ . Մալաքոֆի կը տիրեն Գաղղիացիք Պոսքէ և Մաք–Մահոն զօրավարաց հրամանատարութեամբը , չորս ժամուան արիւնալից պատերազմէ մը ետքը ։ Իսկ Անգղիացւոց Մեծ Ռէտանի վրայ ըրած յարձակմունքը , նոյնպէս Գաղղիացւոց միջնաբերդին վրայ ըրած յարձակմունքին ձախողիր ։ Գաղղիացւոց կողմանէ կը մեռնին Պրէթոն , Սէն–Բօլ , Տը–Մարոշ , Բիւէ և Նիոլ զօրավարները . և մահացու կը վիրաւորուին Բանթըվէ և Պիսան . ընդ ամէնը Գաղղիացւոց կորուստը կը հասնի 7557 հոգւոյ . իսկ Անգղիացւոցը 2447 հոգւոյ ։ Ռուսաց կողմանէ կը մեռնին Ժիւֆրով և Լիսէնքա զօրավարները . և ծանր վէրք կ'առնեն Գրուլէվ և Մարթինոյ զօրավարները ։ Երկրորդ օրը Ռուսք Սեւաստոպոլի հիւսիսային կողմը կը քաշուին վառօդարաններն և ամրութիւնները օդ հանելով . նոյնպէս նաև քաղաքին մէկ մասը կ'այրեն , նաւերը մեծաւ մասամբ կ'ընկղմեն . ասով դաշնակիցք Գարապելնայեասի և քաղաքին հարաւային կողմին կը տիրեն տարբեր մը չափ պատերազմելէն ետքը ։

— Նաբոլէոն կայսրը սպաննելու փորձ մը . բայց կայսրը անվնաս կ'ազատի ։

11 · Պատերազմ հեծելազօրաց Ռուսաց և Տաճկաց մէջ Կարսի Ճամբուն վրայ , որուն մէջ Ռուսաց հրամանատարն էր Գովալէվսքի զօրավարը . Տաճկաց Ալի փաշա հրամանատարը գերի կ'իյնայ Ռուսաց ձեռքը ։

12 · Ալեքսանդր Ռուսաց կայսրը 'Ալքոլայէվ երթալու համար Ճամբայ կ'ելլէ , և կը հասնի հոն ամսուս 25ին ։

24 · Դաշնակիցք զօրք կը խաւրեն Գամանի և Ֆանակորիայի դէմ . (Սև ծովու մէջ) ։

29 · Եւրաթորիայի (Կէօզլէվ) մօտ հեծելազօրաց պատերազմ մը կ'ըլլայ Ռուսաց և Գաղղիացւոց մէջ ։ Ռուսք ընդ զօրավարութեամբ Գորֆ սպարապետին չարաչար կը յաղթուին Գաղղիացւոցմէ , որոնց զօրավարն էր ա' Ալլոնվիլ ։ Գաղղիացիք 6 թնդանօթ ձեռք կը ձգեն ։

— Ռուսք ընդ զօրավարութեամբ Մուրաւիէվ ատղակալի–սպարապետին Կարսի վրայ կը յարձակին ։ Եօթը ժամ պատերազմելէն վերջը սաստիկ կորուստով ետ կը վանուին 7000 հոգի կորսընցնելով ընդ մեռեալ և ընդ վիրաւոր ։ Վիրաւորուողներուն մէջը կը գտնուին Գովալէվսքի (որ քիչ օրէն ետքը առած վէրքին պատճառաւ կը մեռնի) , Կակարէն իշխանը , Մայաէլ և Պրօնէվսքի ։ Իսկ մեռնողներուն մէջը կը գտնուի Գէորգ իշխանը , որ Վրացւոց Գէորգ Ը. վերջի թագաւորին պզտի տղան էր ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ

7 · Սև ծովի միացեալ նաւախումբին մէկ մասը Գամիէշէն Ճամբայ կ'ելլայ , և երկու օրէն Օսեասայի գիմաց կը հասնի ։ (9 եռայարկ նաւ , 28 շոգենաւ , 9 թնդանօթաձիգ պզտի նաւ և 3 ծովաշարժ մարտկոց) ։

9 · Ճերմակ ծովուն (Եւրոպայի հիւսիսային ծայրը) պաշարումը կը վերցուի ։

15 · Դաշնակցաց ամսուս 7ին խաւրած նաւատորմիղին մէջի եղած զօրքը Ռուսաց Քըլ–Պուրուն ըսած բերդին քովերը ցամաք կ'ելլան , որն որ Տնեբերի ձախակողմեան եզերքին վրայ կ'իյնայ ։

— Ռուսաց կայսրը հրաման կը հանէ նոր զօրաժողով ընելու բոլոր կայսրութեան մէջ , հազարին տասը առնելով . 'ի բաց առեալ քանի մը գաւառներ որոնցմէ արդէն քիչ առաջ նոր զօրաժողով ըրեր էր հազարին 23 հոգի առնելով ։

Կը շարունակուի ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ